

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 10/7

17 մարտի 2015 թ.

Քննարկվեց քաղաքացի Դավիթ Միրզոյանի 26.02.2015 թ.-ի դիմումով բերված գանգատը ՀՀ ՖՆ ԱՄՄՁՄ մաքսատան պետի 19.02.2015 թ-ի թիվ 435 որոշման դեմ:

Քաղաքացի Դավիթ Միրզոյանի գանգատում բերված փաստարկները.

Քաղաքացի Դ.Միրզոյանը ՀՀ է ներմուծել 2009 թ.-ի արտադրության աջակողմյան ղեկով «Mercedes-Benz B 180» մակնիշի ավտոմեքենա և ԱՄՄՁՄ մաքսատան համապատասխան աշխատակիցներին ներկայացրել է Մաքսային միության մաքսային տարածք արտահանելու նպատակով այն ձեռք բերելու գինը և մինչև ՀՀ մաքսային սահման մեքենան տեղափոխելու ծախսերը հիմանավորող բոլոր փաստաթղթերը:

Գանգատաբերը, համաձայն 25.01.2008թ.-ի «Մաքսային միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքը որոշելու մասին» համաձայնագրի 4-րդ հոդվածի, դիմել է ԱՄՄՁՄ մաքսատան պետին՝ մեքենայի մաքսային արժեքը գործարքի արժեքի մեթոդով (մեթոդ 1-ով) որոշելու խնդրանքով:

19.02.2015թ.-ի թիվ 435 որոշումով ավտոմեքենայի գործարքի գնի մեթոդով ձևակերպելու դիմումը ԱՄՄՁՄ մաքսատան պետի կողմից մերժվել է այն պատճառաբանությամբ, որ հաշիվ ապրանքագրում նշված ձեռքբերման արժեքը զգալիորեն ցածր է եղել ԵՏՄ տարածքում նույնատիպ մեքենայի համար գործող արժեքներից և հանձնարարվել է ՄՄՁ բաժնին ձևակերպումը կատարել վերոնշյալ համաձայնագրի 10-րդ հոդվածով սահմանված՝ պահուստային մեթոդով (մեթոդ 6-ով):

Գանգատաբերը գտնում է, որ տվյալ մերժման պատճառաբանությունը հակասում է նշված համաձայնագրի 2-րդ հոդվածի 1-ին կետի պահանջին, համաձայն որի՝ ներմուծվող ապրանքների մաքսային արժեքի որոշման համար առավելագույն հնարավոր չափով հիմք պետք է ծառայի այդ ապրանքների հետ կատարվող գործարքի արժեքը և համաձայնագրի 4-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջին, համաձայն որի՝ 4.2 կետում նշված ստուգիչ մեծություններն օգտագործվում են հայտարարատուի (մաքսային ներկայացուցչի) նախաձեռնությամբ բացառապես համեմատության նպատակներում և չեն կարող օգտագործվել որպես հիմք՝ ապրանքների մաքսային արժեքն որոշելու համար:

Գանգատաբերը նշում է նաև, որ օրենքի հստակ սահմանումը ազատում է իրեն՝

- նույն վաճառողի կողմից նույն գնով, նույն տեխնիկական տվյալներով ավտոմեքենայի վաճառքի առկա առաջարկն ապացուցելու անհրաժեշտությունից,

- ԵՏՄ տարածքում նույնատիպ մեքենայի համար գործող արժեքները վիճարկելու անհրաժեշտությունից,

- վերոնշյալ համաձայնագրի 10-րդ հոդվածով սահմանված՝ պահուստային մեթոդով «Mercedes-Benz B 180» (116 ձիաուժ շարժիչով) մակնիշի ավտոմեքենայի մաքսային արժեքի որոշման համար «Mercedes-Benz B 170» (116 ձիաուժ շարժիչով) և B 200 (136 ձիաուժ շարժիչով) մեքենաների արժեքների միջին թվաբանականով կատարված հաշվարկը վիճարկելու անհրաժեշտությունից,

- աջակողմյան ղեկով ավտոմեքենայի մաքսային արժեքը որոշելու համար նույն մոդելի ձախակողմյան ավտոմեքենայի մաքսային արժեքից 800 ԱՄՆ դոլարի չափով կատարված նվազեցումը վիճարկելու անհրաժեշտությունից:

Վերը շարադրվածի հիման վրա գանգատաբերը գտնում է, որ ԱՄՄՁՄ մաքսատան պետի 19.02.2015թ.-ի թիվ 435 որոշումը հակասում է Մաքսային միության գործող օրենսդրությանը, ուստի այն պետք է չեղյալ համարվի և բավարարվի ավտոմեքենայի մաքսային արժեքը գործարքի գնի մեթոդով որոշելու իր օրինական պահանջը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ քաղաքացի Դավիթ Միրզոյանը թիվ 2015/05100033/5272 փոխադրման ամփոփագրով ՀՀ տարածք է ներմուծել 2009 թ-ի արտադրության «Mercedes-Benz B 180» մակնիշի ավտոմեքենա:

Դ.Միրզոյանը համապատասխան դիմում է ներկայացրել Ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների մասնագիտացված մաքսատան (այսուհետ՝ ԱՄՄՁՄ մաքսատուն) պետին՝ նշյալ ավտոմեքենան գործարքի գնի մեթոդով ձևակերպելու համար: Սակայն, Դ.Միրզոյանի վերոգրյալ պահանջը ԱՄՄՁՄ մաքսատան պետի 19.02.2015 թ-ի թիվ 435 որոշմամբ մերժվել է: Մերժման համար հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ Դ.Միրզոյանի կողմից որպես ամտոմեքենայի ձեռքբերման փաստաթուղթ ներկայացված թիվ 163184 հաշիվ-ապրանքագրում ավտոմեքենայի ձեռքբերման արժեքը զգալիորեն ցածր է եղել ԵՏՄ տարածքում նույնատիպ մեքենայի համար գործող արժեքներից: Նման եզրակացության համար հիմք է հանդիսացել www.avito.ru և www.auto.kz ինտերնետային կայքերի ուսումնասիրությունը:

Ելնելով վերոգրյալից՝ ԱՄՄՁՄ մաքսատան պետի 19.02.2015թ.-ին թիվ 435 որոշմամբ քաղաքացի Դ.Միրզոյանի կողմից թիվ 2015/05100033/5272 փ/ա-ով ՀՀ տարածք ներմուծված «Mercedes-Benz B 180» մակնիշի ավտոմեքենայի գործարքի գնի մեթոդով ձևակերպելու դիմումը մերժվել է, ինչպես նաև հանձնարարվել է ՄՄՁ բաժնին ձևակերպումը կատարել համաձայն 25.062008 թ-ի «Մաքսայի միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մասին» համաձայնագրի 10-րդ հոդվածով սահմանված մեթոդ 6-ով՝ պահուստային մեթոդով:

Վերոգրյալ փաստական հանգամանքների վերաբերյալ հարկ է մեջբերել հետևյալ իրավանորմերի դրույթները: Այսպես, համաձայն 25.01.2008 թ-ի «Մաքսային միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքը որոշելու մասին» համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) 2-րդ հոդվածի 1-ին կետի. «Ներմուծվող ապրանքների մաքսային արժեքի որոշման համար առավելագույն հնարավոր չափով հիմք պետք է ծառայի այդ ապրանքների հետ կատարվող գործարքի արժեքը՝ Համաձայնագրի 4-րդ հոդվածով (1-ին՝ Ներմուծվող ապրանքների հետ գործարքի արժեքի մեթոդ) սահմանված իմաստով:

Այն դեպքում, եթե ներմուծվող ապրանքների արժեքը այդ ապրանքների հետ գործարքի գնի հիման վրա հնարավոր չէ որոշել, ապա ապրանքների մաքսային արժեքը որոշվում է նշյալ Համաձայնագրի 6-րդ (2-րդ՝ նույնական ապրանքների գործարքի գնի որոշման մեթոդ) և 7-րդ (3-րդ՝ համանման ապրանքների գործարքի արժեքի որոշման մեթոդ) հոդվածներով սահմանված դրույթներին համապատասխան, որոնք կիրառվում են ըստ հերթականության»:

Համաձայնագրի 6-րդ և 7-րդ հոդվածներին համապատասխան՝ ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը որոշելն անհնար լինելու դեպքում, այդ արժեքը որոշելու համար կարող է հիմք ծառայել կամ այն գինը, որով ներմուծվող, նույնական կամ

համանման ապրանքները վաճառվել են Մաքսային միության մաքսային տարածքում (նշյալ Համաձայնագրի 8-րդ հոդված (4-րդ՝ հանման մեթոդ)), կամ ապրանքների հաշվարկային արժեքը, որը որոշվում է սույն Համաձայնագրի 9-րդ (5-րդ՝ գումարման մեթոդ) հոդվածին համապատասխան:

Համաձայնագրի 1-ին կետով սահմանված է նաև, որ այն դեպքում, եթե ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը որոշելու համար հնարավոր չէ օգտագործել վերոնշյալ հոդվածներից ոչ մեկը, ապա ապրանքների մաքսային արժեքի որոշումն իրականացվում է նշյալ Համաձայնագրի 10-րդ հոդվածին (պահուստային մեթոդով) համապատասխան:

Վերոգրյալ իրավանորմերի դրույթներից հետևում է, որ վերը նշված «Mercedes-Benz B 180» մակնիշի ավտոմեքենայի մաքսային արժեքի որոշման մեթոդի ընտրությունը պետք է կատարվեր ելնելով մեթոդի՝ ըստ հերթականության ընտրության սկզբունքից: Մասնավորապես, մեթոդ 6-ը (պահուստային մեթոդը) պետք է կիրառվեր միայն այն պարագայում, երբ դրան նախորդող մեթոդների կիրառման համար անհրաժեշտ պայմանները բավարարված չլինեին:

Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում չեն պահպանվել Համաձայնագրի վերոգրյալ դրույթներով նախատեսված պահանջները, այն է՝ մեթոդ 1-ով նախատեսված կարգով ավտոմեքենայի ձևակերպումը չկատարելու պահանջը մերժվելու պարագայում, պետք է ուսումնասիրվեին մեթոդ 1-ին հաջորդող մնացած մեթոդների ըստ հերթականության կիրառման հնարավորությունը: Սակայն ԱՄՄՁՄ մաքսատան պետի 19.02.2015թ.-ին թիվ 435 որոշմամբ հանձնարարվել է միանգամից կիրառել մեթոդ 6-ը՝ պահուստային մեթոդը, ըստ էության, առանց քննարկելու դրան նախորդող մեթոդների կիրառման հնարավորությունը:

Գործում առկա ապացույցների ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը եկավ եզրակացության, որ տվյալ դեպքում «Mercedes-Benz B 180» մակնիշի ավտոմեքենայի մաքսային արժեքը հնարավոր է որոշել մեթոդ 6-ին (պահուստային մեթոդ) նախորդող մեթոդ 4-ով՝ հանման մեթոդով:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Չեղյալ համարել ՀՀ ՖՆ ԱՄՁՄ մաքսատան պետի 19.02.2015թ.-ի թիվ 435 որոշումը:

2. ՀՀ ՖՆ Ավտորանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների մասնագիտացված մաքսատան պետին.

թիվ 2015/05100033/5272 փոխադրման ամփոփագրով ՀՀ տարածք ներմուծված 2009 թ-ի արտադրության «Mercedes-Benz B 180» մակնիշի ավտոմեքենայի մաքսային արժեքի որոշման համար կիրառել Համաձայնագրի 8-րդ հոդվածով սահմանված մեթոդ 4-ը:

Հանձնաժողովի նախագահ՝


Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ
